ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԽՄԲԱՅԻՆ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հռիփսիմե Խաչատրյան

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի ավագ դասախոս, ոստիկանության մայոր

Խմբային հանցավորությունը, մեր կարծիքով, անհրաժեշտ է դիտարկել քրեաբանական այնպիսի հասկացությունների համատեքստում, ինչպիսիք են անչափահասների հանցավորությունը և խմբային հանցավորությունը:

Անչափահասների հանցավորությունը հանցավորության ինքնուրույն տեսակ է՝ պայմանավորված նրա զարգացման քանակական ու որակական առանձնահատկություններով, ինչպես նաև անձի անհատականությամբ, որի վարքագծի հիմքում ընկած են եսասիրական շարժառիթներն ու անկայուն հոգեվիճակը[1]:

Տեսական գրականության մեջ գոյություն ունեն անչափահասների հանցավորության հասկացության տարբեր սահմանումներ: Մի դեպքում այն հանցագործությունների ամբողջություն է, որոնք կատարվում են չափահասության տարիքի չհասած, այսինքն՝ 14-18 տարեկան անձանց կողմից[2]: Մեկ այլ աղբյուրի համաձայն՝ անչափահասների հանցավորությունը սահմանվում է որպես սոցիալ-իրավական, հարաբերականորեն զանգվածային երևույթ, որը քրեական օրենքով արգելված հանրորեն վտանգավոր արարքների ամբողջություն է, որոնք կատարվում են կոնկրետ տարածքում և կոնկրետ ժամանակահատվածում 14-17 տարեկան անձանց կողմից[3]:

ՀՀ գործող քրեական օրենսդրությունը հստակ սահմանում է քրեական պատասխանատվության տարիքը: Այսպես, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետ՝ քր. օր.) 23 հոդվածի համաձայն՝ քրեական պատասխանատվության ենթակա է միայն մեղսունակ ֆիզիկական անձը, ով հանցանք կատարելու պահին հասել է քր. օր.-ով սահմանված տարիքի, իսկ 24 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական պատասխանատվության ենթակա է այն անձը, ում 16 տարին լրացել է նախքան հանցանք կատարելը: Միևնույն ժամանակ նույն հոդվածի 2-րդ կետով սահմանվում է այն հանցագործությունների շրջանակը, որտեղ հանցագործության սուբյեկտը 14 տարեկան անձն է: Ստացվում է՝ քր. օր.-ը սահմանում է քրեական պատասխանատվության նվազագույն սահմանը՝ չկոնկրետացնելով առավելագույնը, ինչը, կարծում ենք, բացթողում է: Սակայն այս բացը լրացված է քրեական օրենսգրքի նախագծում, որի 104 հոդվածի 1-ին մասը հստակ սահմանում է, որ հանցանք կատարած անչափահաս է համարվում հանցագործության պահին տասնչորս տարին լրացած, սակայն տասնութ տարին չլրացած անձը:

---

[1] Տե՛ս Криминология, Учебник / Под. Ред. В.Н. Кудрявцева и В.Е.Эминова.–3-е изд., переаб. и доп. – М., Юрист, 2007. – էջ 477, Криминология, Учебник для вузов/ Под. ред. проф. В.Д. Малкова. .–3-е изд., переаб. и доп. – М.,ЗАО «Юстицинформ», 2008, էջ 355:

[2] Տե՛ս Криминология, Учебник для вузов, 2008, էջ 346:

[3] Տե՛ս **Прозументов Л. М.** Криминологическая характеристика преступности несовершеннолетних (региональный аспект) [Текст] / Л. М. Прозументов. – Томск, изд-во Том. ун-та, 2004, էջ 80:

Մեր կարծիքով, քրեաբանության տեսանկյունից անչափահասների հանցավորության տակ պետք է հասկանալ քրեական օրենքով նախատեսված հանրորեն վտանգավոր այն արարքների ամբողջությունը, որոնք կատարվում են 11-18 տարեկան անձանց կողմից, քանի որ ՀՀ կառավարության Հայաստանի Հանրապետության ոստիկանության՝ անչափահասների գործերով ծառայության աշխատանքների կազմակերպման կարգը հաստատելու որոշման նախագծի համաձայն՝ հանրորեն վտանգավոր արարք կատարած անչափահասներին պրոֆիլակտիկ հաշվառման են վերցնում 11 տարեկանից սկսած, և նրանց նկատմամբ իրականացնում են կանխարգելիչ աշխատանքներ, որոնք ըստ էության ոչնչով չեն տարբերվում 14 տարեկան անչափահասների նկատմամբ իրականացվող աշխատանքներից:

Ինչ վերաբերվում է խմբային հանցավորության հասկացությանը՝ որպես հանցավորության ինքնուրույն տեսակի, մասնագիտական գրականության մեջ այն սահմանվում է հանրորեն վտանգավոր, սոցիալական, քրեաիրավական, հարաբերականորեն զանգվածային երևույթ, որը գոյություն ունի կոնկրետ տարածքում, կոնկրետ ժամանակահատվածում և բաղկացած է խմբային հանցագործություններից, որոնք ձևավորվում են համատեղ հանցավոր գործունեություն իրականացնող անձանց և հանցավոր խմբերի կողմից[1]:

Համատեղ գործունեությունը գրականության մեջ բնութագրվում է որպես խմբային[2]: Ըստ հետազոտողների՝ հենց մի քանի մարդկանց համատեղ գործունեությունն է միավորում խմբերում, պայմանավորում խմբի զարգացման մակարդակն ու նրա հիմնական բնութագրումները[3]:

Համատեղ գործունեության հատկանիշների ընդհանրացմամբ կարող ենք համատեղ գործունեությունը սահմանել որպես ընդհանուր նպատակի շուրջ երկու և ավելի անձանց ներգրավվածություն, որտեղ առկա է խմբի անդամների ուժերի միավորում, միմյանց վրա փոխազդեցություն, ինչն արտահայտվում է գործառույթների բաժանմամբ, յուրաքանչյուր անդամի գործողության կախվածությունը խմբի մյուս անդամների գործողություններից, որոնք ուղղված են խմբային գործունեության ընդհանուր արդյունքին (հետևանքներին):

Այս սահմանումը բնորոշ է նաև համատեղ հանցավոր գործունեությանը: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 25- ՎԲ- 48/08 գործի վերաբերյալ որոշման մեջ արտահայտված է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Հանցակիցների գործունեության համատեղությունը նշանակում է, որ հանցագործության մասնակիցներից յուրաքանչյուրի գործողությունները փոխադարձ լրացնում են միմյանց և ուղղված են կոնկրետ հանցանքի կատարմանը: Հանցակիցները, միացնելով իրենց համատեղ ջանքերը, ձգտում են միասնական արդյունքի, և դրա համար յուրաքանչյուրն իր ներդրումն է ունենում ընդհանուր գործում»[4]: Ինչպես

---

[1] Տե՛ս **Шеслер А.В.** Групповая преступность: Криминологические и уголовно-правовые аспекты, Автореферат диссертации на соискание ученой степени доктора юридических наук, էջ 9:

[2] Տե՛ս **Кричевский Р. Л.,** Дубовская Е. М. Психология малой группы. - М., 1991, էջ 35:

[3] Տե՛ս **Любен Десев.** Психология малых групп. - М., 1979, էջ 25; Психологическая теория коллектива. - М., 1979. - էջ 147 - 148; **Петровский А.В.** Личность. Деятельность. Коллектив. - М., 1982, էջ 55 - 59; **Донцов А.И.** Психология коллектива. - М.,1984, էջ 22, 43, 61,79,87 – 89:

[4] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները քրեաիրավական նորմերի կիրառման վերաբերյալ / ՀՀ ոստիկանաության կրթահամալիր, կազմ.՝ Գ. Թ. Գրիգորյան, Մ. Մ.Մարկոսյան.- Եր.: Լիմուշ, 2012, էջ 17-18:

տեսնում ենք, համատեղ հանցավոր գործունեությունը բնութագրվում է այն նույն հատկանիշներով, որոնք բնորոշ են առհասարակ համատեղ գործունեությանը:

Ինչ վերաբերում է անչափահասների խմբային հանցավորությանը, ապա, ինչպես կարծիք է հայտնել Կ. Ե. Իգոշևը, անչափահասների հանցավորությունը խմբային հանցավորությունն է, որն իր արդիականությունը չի կորցրել մինչև օրս[1]:

Քրեաբանները նկատել են, որ անչափահասների հանցավորությունը միշտ էլ կրել է խմբային բնույթ[2]: Համանման կարծիքներ են արտահայտել նաև այլ հեղինակներ և հետազոտողներ[3]:

Անչափահասների կատարած խմբային հանցագործությունների բաժինը մոտավորապես 1.5-5 անգամ բարձր է չափահասների հանցավորության համանման ցուցանիշից[4] և կազմում է անչափահասների հանցավորության կառուցվածքում 60-ից մինչև 80%[5]: Դրա համար էլ գրականության մեջ խմբային հանցագործությունները ավանդաբար համարվում են անչափահասների հանցավորության բնութագրիչ առանձնահատկություններից մեկը:

Քանակական և որակական բնութագրիչներով պայմանավորված՝ անչափահասների խմբային հանցավորությունը մշտապես փոփոխվում է շրջապատող իրականության օբյեկտիվ պայմաններից: Ներկայիս սոցիալ-տնտեսական պայմաններում անչափահասների հանցավորության կառուցվածքի և շարժի ցուցանիշների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգել, որ վերջին տարիներին անչափահասների հանցավորությունը ձեռք է բերում որակական նոր ձևեր, որոնք բնութագրվում են բարձր կազմակերպվածությամբ և հասարակական վտանգավորությամբ:

Անչափահասների խմբային հանցավորությունը հանցավորության բաղկացուցիչ մասն է և ունի իր յուրահատկությունները, որոնք պայմանավորված են դրա մակարդակով, շարժով, կառուցվածքով, դետերմինանտներով:

Անչափահասների խմբային հանցավորության իրական վիճակի մասին պատկերացում կազմելու և դրա զարգացման միտումները վեր հանելու համար վերլուծությունը պետք է սկսել հանցավորության կառուցվածքում անչափահասների խմբով կամ նրանց մասնակցությամբ կատարված հանցագործությունների տեսակարար կշռի ցուցանիշի ուսումնասիրությունից[6]:

Անչափահասների հանցավորության, այդ թվում՝ անչափահասների խմբային հանցավորության քրեաբանական բնութագիրը չի կարող լիարժեք լինել առանց պաշտոնական վիճակագրության տվյալների վերլուծության:

---

[1] Տե՛ս **Игошев К. Е.** Правонарушения ответственность несовершеннолетних. – Свердловск, 1973, էջ 57:

[2] Տե՛ս **Самоделкин С. М.,Сибиряков С. Л.** Преступность несовершеннолетних и ее предупреждение. Волгоград, 1992, էջ 9:

[3] Տե՛ս **Абызов К. Р., Гриб В. Г., Ильин И. С.** Криминология: курс лекций / под ред. В. Г. Гриба. М., 2008, էջ 142, **Алексеев А. И.** Криминология: курс лекций. М., 2004, էջ 194, Воронин Ю. А. Введение в криминологию, курс лекций. М., 2008, էջ 214–215:

[4] Տե՛ս Криминологи о неформальных молодежных объединениях. - М.: Юрид.лит., 1990, էջ 79, Криминология: учебник / под ред. акад. В. Н. Кудрявцева, проф. В. Е. Эминова. М., 1997, էջ 83:

[5] Տե՛ս Криминология / Под ред. А. И. Долговой. - М., 1997, էջ 693, Криминология / Под ред. Н. И. Кузнецова, Э. И. Эминова. - М., 1997, էջ 283:

[6] Վիճակագրական տվյալները տրամադրել է ՀՀ ոստիկանության տեղեկատվական կենտրոնը:

Ուստի փորձենք գնահատել անչափահասների խմբային հանցավորության վիճակը, կառուցվածքը և մակարդակը, ինչպես նաև դրանց դրական և բացասական միտումները, որի համար նպատակահարմար է օգտագործել և դիտարկել անչափահասների խմբային հանցավորության շարժը վերջին տասը տարիների կտրվածքով:

Այսպես, վերջին տասը տարիների ընթացքում Հայաստանում անչափահասների հանցավորությունը թվացյալ «կայուն» վիճակում է՝ գործակիցների աննշան նվազմամբ կամ աճով:

Հարկ ենք համարում նշել, որ անչափահասների հանցավորությանը բնորոշ է լատենտայնության բարձր աստիճան[1]:

Գրանցված հանցագործությունների մեջ անչափահասների կողմից կատարված հանցագործությունների տեսակարար կշիռը 4.5% է (տե՛ս աղյուսակ 1, գծապատկեր 1):

Աղյուսակ 1

Տարիներ	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
գրանցված հանցագործությունների քանակը	10083	8875	9757	8428	9271	14339	15477	16572	15776	18333
գրանցված հանցագործությունների մեջ անչափահասների կողմից կատարված հանցագործությունների տեսակարար կշիռը	6%	6%	5%	7%	6%	4%	3%	3%	3%	2%

Գծապատկեր 1



[1] Տե՛ս Անչափահասների հանցավորության դեմ պայքարի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (խմբագիր՝ իրավ. գիտ. դոկտոր Ա. Գաբուզյան- Եր.: ԵՊՀ հրատ., 2010, էջ 9):

Համաձայն վիճակագրական տվյալների՝ անչափահասների հանցավորության մեջ հանցագործությունների 37% -ը անչափահասները կատարել են խմբում (տե՛ս աղյուսակ 2, գծապատկեր 2):

Աղյուսակ 2

Տարիներ	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Անչափահասների կողմից կատարված հանցագործությունների քանակը	209	197	198	301	246	192	207	198	91	93
Անչափահասների կատարված հանցագործությունների մեջ խմբերի կողմից կատարած հանցագործությունների տեսակարար կշիռը	38%	39%	39%	53%	46%	36%	39%	38%	22%	22%

Գծապատկեր 2



Չափահասների համեմատ՝ կատարված հանցագործությունների ավելի նեղ շրջանակը բացատրվում է անչափահաս անձանց հատուկ սոցիալական և իրավական կարգավիճակով, նրանց սոցիալական դերակատարմամբ: Մի շարք արարքների համար քրեական պատասխանատվությունը վրա է հասնում տասնվեց տարեկանից, ուստի դրանից ցածր տարիքի անչափահասները չեն կարող լինել տվյալ հանցագործության սուբյեկտ:

Անչափահասների խմբային հանցավորության կառուցվածքի վերլուծությունն ըստ հանցագործության տեսակի ցույց է տալիս, որ անչափահասներն առավել հաճախ կատարում են շահադիտական և բռնի շահադիտական բնույթի հանցագործություններ (տե՛ս աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Տարիներ	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Ընդհանուր հանցագործությունների թիվը	209	197	198	301	246	192	207	198	91	93
գողություն	161	156	165	264	216	129	161	159	84	78
կողոպուտ	7	16	5	9	8	29	12	2	1	2
ավազակություն	5	3	9	2	9	8	10	14	1	4
սպանություն	2	-	1	-	-	-	1			-
դիտավոր. առողջությանը վնաս պատճառել	1	-	-	3	3	3	1	4	2	-
ավտ. կամ տրանսպ. այլ միջոցին ապօրինաբար տիրանալն առ. հափշտ. նպ.	11	10	2	18	4	3	-	1	-	2
խուլիգանություն	14	7	12	2	2	11	12	9	2	3
այլ հանցագործություններ	6	5	4	2	4	8	10	9	1	4

Անչափահասների խմբային հանցավորության վերլուծությունը ցույց է տալիս, որ առավել տարածված են սեփականության դեմ ուղղված հանցագործությունները, որոնց մեջ էլ մեծ է գողությունների տեսակարար կշիռը (տե՛ս աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Տարիներ	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Անչափ. խմբերի կողմից կատարված հանցագործությունների թիվը	209	197	198	301	246	192	207	198	91	93
գողությունների տեսակարար կշիռը	77%	79%	83%	88%	88%	67%	78%	80%	92%	84%

Երկրորդ տեղում է հասարակական կարգի դեմ ուղղված հանցագործությունները՝ խուլիգանությունները (5-9%), ապա՝ կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունները, որոնց տեսակարար կշիռը անչափահասների խմբային հանցավորության մեջ աննշան է (1-2% , տե՛ս աղյուսակ 3):

Վերոնշյալ վիճակագրական տվյալներից ակնհայտ է դառնում, որ անչափահասների խմբերի կողմից կատարվող գողությունների և խուլիգանությունների կողքին տարածված են նաև կողոպուտները և ավազակությունները:

Վերջին տասը տարիների ընթացքում անչափահասների մասնակցությամբ խմբերի կողմից նկատվում են այնպիսի հանցագործությունների կատարման դեպքեր, որոնք նախկինում բնորոշ էին միայն չափահասներին: Այսպես, ՀՀ ոստիկանության տեղեկատվական կենտրոնի տրամադրած վիճակագրական տվյալների համաձայն, վերջին տասը տարիների ընթացքում հայտնաբերվել է անչափահասների մասնակցությամբ խմբերի կողմից մարդու առևանգման՝ 7, շորթման՝ 2, զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր հափշտակելու կամ շորթելու՝ 3, սեքսուալ բնույթի բռնի գործողությունների՝ 3 դեպք և այլն:

Անչափահասների խմբային հանցավորության կառուցվածքի ուսումնասիրման ընթացքում նկատվում է անչափահասների՝ հանցավոր խմբերի կառուցվածքային փոփոխություն. այսպես, եթե մինչև 2000 թ. անչափահասների կողմից կատարվող

հանցագործություններում գերակշռում էին միայն անչափահասների խմբերի կողմից կատարվող հանցավոր արարքները, ապա 2000 թ.-ից հետո մեծանում է խառը՝ անչափահասներից և չափահասներից կազմավորված խմբերում անչափահասների կողմից կատարվող արարքների տեսակարար կշիռը[1]:

Այսօր հանցագործության դեպքերի մոտ կեսից ավելին անչափահասները կատարում են չափահասների հետ միասին (տե՛ս գծապատկեր 3, աղյուսակ 5):

Գծապատկեր 3



Աղյուսակ 5

Տարիներ	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Անչափահաս.մասնակցությամբ խմբերի կողմից կատարված հանցագործությունների ընդհ. քանակը	209	197	198	301	246	192	207	198	91	93
Չափահաս.մասնակցությամբ խմբերի կողմից կատարված հանցագործությունների տեսակարար կշիռը	57%	55%	63%	46%	69%	48%	66%	38%	58%	46%

Բացի դրանից, անչափահասների հանցավորության վերջին տարիների վիճակագրությունից երևում է, որ անչափահասների խմբային հանցավորության մոտ կեսը բաժին է ընկնում Երևան քաղաքին (տե՛ս աղյուսակ 6):

Աղյուսակ 6

Տարիներ	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
ՀՀ- ում անչափ. խմբերի կողմից կատարված հանցագործություն. թիվը	209	197	198	301	246	192	207	198	91	93
Երևան քաղաքում անչափ. խմբերի կողմից կատարված հանցագործություն. թիվը	73	79	70	162	103	57	71	42	45	45

Այսպիսով, կատարված վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգելու, որ անչափահասների հանցավորությունն ունի հետևյալ միտումները՝

1. անչափահասների խմբային հանցավորության նվազում,

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 14:

2. անչափահասների կողմից նոր հանցագործությունների կատարման միտում, որոնք նախկինում բացառապես կատարվում էին չափահասների կողմից,

3. անչափահասների կողմից չափահասների հետ հանցագործություններ կատարելու կայունություն,

4. խմբերում իգական սեռի անչափահասների թվի աճ,

5. անչափահասների հանցավոր խմբերի մեծ շարժունակություն առաջին հերթին, այսպես կոչված, «գաստրոլյոր խմբերը», որոնք հանցագործություն կատարում են բնակության վայրից բավական հեռու, ինչը վկայում է նրանց քրեական ակտիվության մասին:

ОСНОВНЫЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ГРУППОВОЙ ПРЕСТУПНОСТИ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ В РА

Рипсиме Хачатрян

Соискатель кафедры уголовного права и уголовно- процессуального права Российско-Армянского (Славянского) университета
Старший преподаватель кафедры уголовного права и криминологии факультета правоведения Академии Образовательного комплекса Полиции РА, майор полиции

В статье представлены понятие и характеристика количественных и качественных признаков групповой преступности несовершеннолетних. Автором проанализированы состояние, структура и динамика развития групповой преступности несовершеннолетних за последние 10 лет и на этой основе представлены основные тенденции развития групповой преступности несовершеннолетних.

THE GROUP JUVENILE CRIMINALITY AND ITS TRENDS IN THE REPUBLIC OF ARMENIA

Hripsime Khachatryan

PhD student of Russian – Armenian (Slavonic) University, Criminal and Procedure Chair, Senior lecturer at Police Academy of Police Educational Complex of RA, Department of Law, Chair of Criminal Law and Criminology, Police Major

The notion and quantitative and qualitative characteristics of the group juvenile criminality are presented in the article. The dynamics and structure of the group juvenile criminality for last ten years are analyzed by author. On this basis the general trends of the group juvenile criminality are introduced.

Բանալի բառեր – *հանցագործություն, հանցագործության սուբյեկտ, հանցավորություն, անչափահասների հանցավորություն, անչափահասների խմբային հանցավորություն*
Ключевые слова – *преступление, субъект преступления, преступность, преступность несовершеннолетних, групповая преступность несовершеннолетних*
Keywords – *crime, subject of crime, criminality, juvenile criminality, group juvenile criminality*